Յուրաքանչյուր անձ, որը գտնվում է ՌԴ-ում՝ անկախ քաղաքացիությունից, ապահովագրական փաթեթի կամ այլ փաստաթղթերի առկայությունից, ունի շտապ բժշկական օգնության ծառայությունը անվճար ստանալու իրավունք:[1]

Շտապ օգնությունը տրամադրվում է այն դեպքերում, երբ կա կյանքին սպառնացող վանգ և անհրաժեշտ է շտապ բժշկական միջամտություն:

Անվճար բժշկական օգնություն տրամադրվում է միայն պետական հիվանդանոցներում:

ՌԴ բոլոր քաղաքներում գործող շտապ օգնության հեռախոսահամարներն են 103 կամ 112՝ բջջային հեռախոսից (շտապ օգնություն կարելի է կանչել նույնիսկ արգելափակված հեռախոսից): Զանգ կատարելուց հետո պետք է անմիջապես տեղեկացնել, թե ինչ է պատահել, որտեղ է գտնվում տուժած քաղաքացին, պատասխանել օպերատորի հարցերին:



# ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Է ԿԱՆՉԵԼ՝

• եթե մարդը ստացել է լուրջ վնասվածք. օրինակ՝ ենթարկվել է վրաերթի կամ ընկել լուսամուտից,

• գիտակցության կորստի դեպքում,

• դժբախտ պատահարի դեպքում,

• ծանր արնահոսության դեպքում,

• ծանր թունավորման դեպքում,

• եթե հղի կնոջ մոտ սկսվել են կծկումներ կամ հանկարծակի ցավեր:



[1] ՌԴ Կառավարության 2013 թվականի մարտի 6-ի թիվ 186 «Ռուսաստանի Դաշնության տարածքում օտարերկրյա քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու կանոնները հաստատելու մասին» որոշում:

Հիշե՛ք, որ Դուք ունեք շտապ բժշկական օգնություն կանչելու իրավունք . «Շտապ օգնություն»-ն իրավունք չունի Ձեզ մերժել, եթե Դուք չունեք ապահովագրություն կամ այլ փաստաթղթեր:



**Շտապ օգնության հեռախոսահամարն է**
**103** կամ **112**
**բջջային հեռախոսից:**

**+7 967 079-71-45**
**+7 915 452-83-92**
**+7 910 000-55-18**

**հեռախոսահամարին`**

Եթե ունեք բժշկական օգնության ծառայության հետ կապված հարցեր կամ խորհրդատվության կարիք, կամ ցանկանում եք իմանալ, թե ինչպե՞ս պաշտպանեք Ձեզ` կարող եք զանգահարել հետևյալ

Региональная экспертная группа по здоровью мигрантов



# ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ